Հավելված N 2
ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի
2019թ. հուլիսի 4-ի N 145-Ա հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Նախնական և միջին մասնագիտական կրթության վարչությունը (այսուհետ՝ վարչություն) Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Վարչության կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում տեսչական մարմնի ղեկավարը:

3. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով, տեսչական մարմնի կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ, տեսչական մարմնի կառավարման խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) որոշումներով, տեսչական մարմնի ղեկավարի հրամաններով, կարգադրագրերով, հանձնարարագրերով, ցուցումներով, տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի՝ իր համակարգման լիազորությունների շրջանակներում տրված կամ տեսչական մարմնի ղեկավարի կողմից տրված և տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի կողմից փոխանցված հանձնարարականներով և առաջադրանքներով, ինչպես նաև այլ իրավական ակտերով:

4. Վարչության անվանումն է՝ Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի նախնական և միջին մասնագիտական կրթության վարչություն:

5. Խորհրդի հավանությանն արժանացած վարչության ներքին կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում և փոփոխում է տեսչական մարմնի ղեկավարը:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

6. Վարչության նպատակն է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում օրենսդրության պահանջների պահպանման ապահովումը, կրթության որակի բարձրացումը և կրթական ծրագրերի յուրացման ապահովմանն աջակցումը:

7. Վարչության խնդիրներն են՝

1) նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջների, կրթության զարգացման պետական ծրագրի իրականացման, պետական կրթական չափորոշիչների, կրթության իրավունքի, կրթության համակարգի սոցիալական երաշխիքների պահպանման նկատմամբ օրենքով սահմանված կարգով վերահսկողության իրականացումը.

2) նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում կրթության կազմակերպման և որակի բարելավման նպատակով Հայաստանի Հանրապետության օրենքների և դրանց համապատասխան ընդունված՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտները կարգավորող իրավական ակտերի դրույթների կիրառման վերաբերյալ բացատրական աշխատանքների իրականացումը, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին իրենց իրավունքների և պարտականությունների մասին տեղեկացումը, ինչպես նաև նշված ոլորտներում կանխարգելիչ միջոցառումների իրականացումը.

3) նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության որակի, չափորոշիչների բարելավման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը.

4) նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում կրթական քաղաքականության իրականացման և կրթական գործընթացի արդյունավետության գնահատման, հետադարձ կապի ապահովման աշխատանքների իրականացումը.

5) տեսչական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումներին մեթոդական և գործնական աջակցություն ցուցաբերելը.

6) կրթական գործունեության ուղղությամբ տնտեսավարող սուբյեկտի կողմից հաշվետվությունների ներկայացման և հավաստիության ապահովումը վերահսկողության միջոցով:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

8. Վարչությունն իր նպատակները և խնդիրներն իրագործելու համար իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ օրենքով սահմանված կարգով իրականացնում է վերահսկողություն, ներառյալ օրենքով սահմանված դեպքերում և կարգով ստուգումներ՝ հետևյալ ուղղություններով՝

ա) կրթության բովանդակությանը համապատասխան կրթական գործընթացի կազմակերպման, պետական կրթական չափորոշիչների, ուսումնական պլանների (մոդուլային) և առարկայական ծրագրերի կատարման, տարեկան ուսումնական ժամանակացույցների և դասացուցակների համապատասխանության.

բ) սովորողների (անկախ կրթության ձևից) գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ստուգման, գնահատման, ամփոփիչ ատեստավորման, քննակարգերի, աշխատակարգերի պահպանման.

գ) ընդունելության, փոխադրման, տեղափոխման, ուսումնառությունն անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման և ավարտական կարգերին համապատասխան՝ սովորողների շարժի.

դ) պետական ավարտական փաստաթղթերի ստացման, պահպանության և բաշխման, փաստաթղթաշրջանառության, հաշվետվությունների իսկության.

ե) պետական կրթական չափորոշիչներին համապատասխան՝ անհրաժեշտ ուսումնական, գիտական, մեթոդական տեղեկատվությամբ (գրադարանային ֆոնդ, տվյալների համակարգչային բազա և այլն), ծրագրերով, դասագրքերով, ուսումնական ձեռնարկներով, գնահատման և ատեստավորման նպատակով օգտագործվող նյութերով, ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացմանը նպաստող այլ նյութերով և ուղեցույցներով ապահովվածության.

զ) լիազորված մարմնի հրամանների, հրահանգների, հանձնարարականների, մեթոդական երաշխավորությունների կատարման.

է) ղեկավար և մանկավարժական աշխատողների ընտրության, հավաստագրման, նշանակման, ինչպես նաև վերապատրաստման գործընթացների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխանության.

ը) կրթության որակի պահպանման նկատմամբ ուսումնական հաստատությունների կանոնադրական պահանջների կատարում, ուսումնական հաստատությունների կառավարման և այլ մարմինների լիազորությունների իրականացում և պահպանում.

2) նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքների, իրավական ակտերի պահանջների խախտման համար օրենքով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ տեսչական մարմնի ղեկավարին ներկայացնում է առաջարկություններ.

3) Հայաստանի Հանրապետության օրենքների և դրանց համապատասխան ընդունված՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտները կարգավորող իրավական ակտերի դրույթների կիրառման վերաբերյալ իրականացում է բացատրական աշխատանքներ, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին տեղեկացնում է իրենց իրավունքների և պարտականությունների մասին.

4) ֆիզիկական և իրավաբանական անձանց նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնելու համար տրված լիցենզիաներն ուժը կորցրած ճանաչելու կամ դրանց գործողությունը կասեցնելու վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում տեսչական մարմնի ղեկավարին.

5) նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում վերահսկողական գործառույթներն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով, տեսչական մարմնի ղեկավարին ներկայացնում է առաջարկություններ՝ այլ մարմիններից, բացահայտված՝ օրենքով չարգելված տեղեկատվություն ստանալու համար.

6) նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում պետական վերահոսկողության գործընթացների և դիտարկումների արդյունավետ իրականացման նպատակով կազմում և սահմանված կարգով ներկայացնում է հաստատման ստուգաթերթերի, ձևաթղթերի, հավելվածների, հարցաշարերի, հարցաթերթիկների և այլ փաստաթղթերի ձևանմուշները.

7) նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության զարգացմանը նպաստող առաջարկությունների ներկայացում, ինչպես նաև դրանց իրականացման վերահսկում.

8) նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում պետական վերահսկողության գործընթացների՝ ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա հաշվետվությունների, ակտերի, տեղեկանքների, զեկուցագրերի, զեկույցների, վերլուծությունների, ամփոփագրերի և այլ փաստաթղթերի կազմում:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

9. Վարչության գործունեությունը ղեկավարում և վերահսկում է տեսչական մարմնի ղեկավարը, համակարգում է տեսչական մարմնի ղեկավարի համապատասխան տեղակալը:

10. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է վարչության պետը, իսկ բացակայության դեպքում նրան փոխարինում է վարչության պետի տեղակալը կամ վարչության գլխավոր մասնագետներից մեկը:

11. Վարչության պետը քաղաքացիական ծառայող է:

12. Վարչության պետը՝

1) իրականացնում է պաշտոնի անձնագրով իրեն վերապահված լիազորությունները.

2) իր լիազորությունների սահմաններում կատարում է տեսչական մարմնի ղեկավարի հանձնարարականները.

3) հաշվետու է տեսչական մարմնի ղեկավարին.

4) կազմակերպում և ղեկավարում է վարչության ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է վարչության առջև դրված խնդիրների և գործառույթների իրականացման համար,

5) կատարում է վարչության աշխատողների պարտականությունների բաշխում՝ համաձայն քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերի.

6) օրենքով, այլ իրավական ակտերով, վարչության կանոնադրությամբ նախատեսված գործունեության ոլորտներների, նպատակների և խնդիրների վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում տեսչական մարմնի ղեկավարին.

7) տեսչական մարմնի ղեկավարին առաջարկություններ է ներկայացնում վարչության քաղաքացիական ծառայողների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերապատրաստման, խրախուսման և կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ.

8) տեսչական մարմնի ղեկավարին, համապատասխան տեղակալին, ըստ անհրաժեշտության, առաջարկում է վարչության աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ, գիտական հաստատությունների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ ներգրավելու, ինչպես նաև աշխատանքային խմբեր ձևավորելու համար.

9) ելնելով վարչության գործառույթներից և խնդիրներից՝ տեսչական մարմնի ղեկավարի համաձայնությամբ և տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի գիտությամբ կարող է հրավիրել խորհրդակցություններ՝ դրանց մասնակից դարձնելով այլ մարմինների պաշտոնատար անձանց, մասնագետների, փորձագետների.

10) իրականացնում է վերահսկողություն վարչությանը հանձնված գույքի պահպանության նկատմամբ.

11) Խորհրդի հաստատմանը ներկայացնելու համար տեսչական մարմնի ղեկավարին է ներկայացնում վարչության գործունեության տարեկան աշխատանքային ծրագիրը:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ

13. Վարչության աշխատողներն ապահովում են տեսչական մարմնի ղեկավարի, ղեկավարի համապատասխան տեղակալի, վարչության պետի՝ օրենսդրությամբ սահմանված կարգով տրված հանձնարարականների կատարումը և պատասխանատվություն են կրում դրանք չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կամ լիազորությունները վերազանցելու համար:

14. Վարչության աշխատողները կարող են ընդգրկվել Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության վարչապետի

որոշումներով և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով ստեղծվող միջգերատեսչական հանձնաժողովներում և այլ աշխատանքային խմբերում:

15. Վարչության աշխատողները տեսչական մարմնի ղեկավարի լիազորագրերով կարող են հանդես գալ Հայաստանի Հանրապետության կամ տեսչական մարմնի անունից:

16. Վարչության պետի, տեղակալի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների, քաղաքացիական ծառայության պաշտոնի հետ կապված դրույթները սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով: